ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Ն. ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16-Ա

14 մայիսի 2019թ.

Ն. ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2019թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու «Ն. Գետաշեն համայնքի թաղամասերի գազաֆիկացմանվ.տնտեսական զարգացման ծրագիրը:

2. Սուբսիդիայի ստացման համար գործող կարգող կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել«Ն. Գետաշեն համայնքի թաղամասերի գազաֆիկացման տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:

3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2019թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ 2019թ մայիսի 14-ից :

Կողմ - 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ավագանու անդամներ

Ն. Ստեփանյան

Ն. Միրզաջանյան

Ս. Ղազարյան

Վ. Կիրակոսյան

Գ. Գևորգյան

Մ. Գորանցյան

Խ. Փինաչյան

Ա. Արսենյան

Խ. Բարբառյան

Համայնքի ղեկավար՝ Կ. Գևորգյան